ԱՂՎԱՆԻՑ (ԳԱՆՁԱՍԱՐԻ) ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐԻ ԳԱՎԱԶԱՆԱԳԻՐՔԸ

Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 2561 ձեռագիրը Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկի՝ 1664 թ. կատարված մի ընդօրինակություն է, որի 262ա-263ա էջերում հետագայում ավելացվել է Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսների Գավազանագիրքը:

Այս ձեռագիրը, նախքան Մատենադարանի սեփականությունը դառնալը, պատկանել է հայտնի հնագետ ու բանահավաք Խաչիկ ծայրագույն վարդապետ Դադյանին[1]: Նա էլ առաջին անգամ 1895 թ. «Արարատ» ամսագրում ներկայացրել է սույն ձեռագիրը՝ հրապարակելով նաև մատյանի ընդարձակ հիշատակարանը[2]: Մատենադարանի Կաթողիկոսական դիվանում պահվում է նաև այդ հիշատակարանի և Աղվանից կաթողիկոսների անվանացանկի՝ Խ. վրդ. Դադյանի ձեռքով 1889 թ. փետրվարի 25-ին Շահբուլաղում կատարված ընդօրինակությունը[3]:

Գավազանագիրքը սկսվում է Աղվանից պատմագրքի «Անուանք հայրապետացն Աղուանից, ամք և գործք նոցին» գլխի ավարտված տեղից[4], այսինքն՝ Տեր Մովսեսին հաջորդած քառասունչորսերորդ կաթողիկոս Մարկոսից (գահակալել է 993-ից), և հասցվում մինչև XVIII դ. կեսերը: Անվանացանկը կազմողը մինչև XII դ. գահակալած կաթողիկոսների անունները թվարկելիս օգտվել է Մխիթար Գոշի «Կաթողիկոսք եւ դէպք Աղուանից աշխարհին ի մէջ ԺԲ դարու» երկից[5]:

Դատելով Ներսես կաթողիկոսին վերաբերող տողում առկա «և այժմ **ՌՃՁԵ**» հստակ նշումից՝ անվանացանկը կազմվել է 1736 թ.: Ցանկում նրան հաջորդող Իսրայել Ջրաբերդցուն առնչվող տեղեկությունն ավելացվել է 1763 թ., այլ ձեռագրով՝ նախքան Գանձասարի կաթողիկոսական աթոռին տիրանալու համար մղված եռամյա աթոռակալական պայքարում վերջինիս պարտությունը Հովհաննես Հասան-Ջալալյանից (1763–1786):

Աղվանից կաթողիկոսական աթոռին Հովհաննես Հասան-Ջալալյանին հաջորդել են հակաթոռ Սիմեոն Ջրաբերդցին (1794–1810) և Հովհաննես կաթողիկոսի եղբայր Սարգիս Հասան-Ջալալյանը (1794–1798 և 1812–1815 թթ.): 1815 թ. Ամենայն հայոց կաթողիկոսության միջնորդությամբ և ցարական կառավարության հրա-

---

[1] *Յ. Թ ո փ ճ է ա ն. Յուցակ ձեռագրաց Խ. վրդ. Դադեանի, հ. Ա, Վաղարշապատ, 1898, էջ 100-101:*

[2] *«Արարատ», 1895, թիւ Ժ, էջ 378–380:*

[3] *Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 240, վավ. 132: Այդ պատճենը, որոշ կրճատումներով, հրապարակել է Լ. Մ կ ր տ ո ւ մ յ ա ն. Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսությունը XVII–XIX դդ., Երևան, 2006, էջ 217-219):*

[4] *Մ ո վ ս է ս Կ ա ղ ա ն կ ա տ ո ւ ա ց ի. Պատմութիւն Աղուանից աշխարհի, Երևան, 1983, էջ 347:*

[5] *Մ խ ի թ ա ր Գ ո շ. Կաթողիկոսք եւ դէպք Աղուանից աշխարհին ի մէջ ԺԲ դարու.– Ղ. Ա լ ի շ ա ն. Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 384-391:*

մանով Գանձասարի կաթողիկոսությունը վերացվել է, և նրա փոխարեն հաստատվել է մետրոպոլիտություն: Գանձասարի վերջին՝ Սարգիս կաթողիկոսը 1815-ից մինչև իր մահը՝ 1828 թ. դեկտեմբերի 19-ը, եղել է մետրոպոլիտ: Սարգիս Հասան-Ջալալյանի մահով փակվեց Գանձասարի կաթողիկոսության պատմության վերջին էջը:

Նշենք, որ, չնայած սեղմ բովանդակությանը, սույն Գավազանագիրքը կարևոր սկզբնաղբյուր է Արցախի, և, մասնավորապես, Գանձասարի կաթողիկոսության պատմության ուսումնասիրման համար:

ԱՐՏԱԿ ՄԱՂԱԼՅԱՆ

ԳԱՒԱԶԱՆԱԳԻՐՔ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՑ ԱՂՈՒԱՆԻՑ

(262ա) *Տէր Մարկոս այրն Աստուծոյ.* ԽԴ (44)

Տէր Յովսէփ **ՆՀ (1021)**[1]. ԽԵ (45)

Տէր Մարկոս. ԽԶ (46)

Տէր Ստեփանոս. ԽԷ (47)

Տէր Յոհաննէս. ԽԸ (48)

Տէր Ստեփանոս - ամ մի և կէս. ԽԹ (49)

Տէր Գագիկս[2] *Գրիգորիս անուանեցին.* Ծ (50)

Տէր Բէժկեն, որ եթող զկարգն և մտաւ աշխարհ. ԾԱ (51)

Տէր Ներսէս. ԾԲ (52)

Տէր Ստեփանոս - ամս Խ (40). ԾԳ (53)

Տէր Ներսէս - ամս Զ (6). **ՌՁԴ (1235).** ԾԴ (54)

Տէր Ստեփանոս. **ՉԺԱ (1262).** ԾԵ (55)

Այս միջոցս Բ կաթուղիկոս է եղեալ՝ Սուքիաս և Պետրոս, չկարացաք իմանալ զկարգն զկնի միմեանց. ԾԶ (56)

Տէր Ստեփանոս վախճանի **ՉՀԲ (1323).** ԾԷ (57)

Տէր Կարապետ **ՊԾԵ (1406).** ԾԸ (58), *մինչև* **ՊՀԳ (1424)** *գտաք զթիւն:*

Տէր Մաթէոս **ՊՁԵ (1436).** ԾԹ (59)

Տէր Աթանաս - ամ մի. Կ (60)

Տէր Յովհաննէս՝ որդի Ճալալին. **ՊՂ (1441)**[3]**.** ԿԱ (61)

---

[1] *Լ. Մկրտումյանի հրապարակման մեջ սխալմամբ տպված է ՆԸ (959 թ.), մինչդեռ 958-965 թթ. Աղվանից կաթողիկոս է եղել Դավիթը (հմմտ. Լ. Մ կ ր տ ռ ւ մ յ ա ն. նշվ. աշխ., էջ 218):*

[2] *Լ. Մկրտումյանի հրապարակման մեջ սխալմամբ տպված է Դաւիթ (հմմտ. նույն տեղում):*

[3] *Մատենադարանում պահվում է Կարա-Կոյունլու Սուլթան Ջհանշահի կնոջ՝ Բեգում-խաթունի 1462 թ. օգոստոսի 6-ի հրովարտակը՝ տրված Գանձասարի Հովհաննես կաթողիկոսին, որով հաստատում է նրա կաթողիկոսական իրավունքները (տե՛ս Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. հրովարտակներ, պր. I, կազմեց Հ. Փափազյանը, Երևան, 1956, էջ 45-47, ռուսերեն պատճենը տե՛ս Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 241, վավ. 197):*

Հովհաննես կաթողիկոսը վախճանվել է 1470 թ., ինչպես վկայում է Մեծիրանից Ս. Հակոբա վանքում գտնվող նրա տապանաքարի արձանագրությունը. «Այս է հանգիստ Տէր Ովհանէս կաթողիկոսին Աղվանից. թվ. ՋԺԹ. (1470)» (Դիվան հայ վիմագրության, պր. V, Արցախ, կազմեց Ս. Բարխուդարյան, Երևան, 1982, էջ 17):

Տէր Մաթէոս. **ՋԳ (1454).** ԿԲ (62)

Տէր Առստակէս. **ՋԻԲ (1473).** ԿԳ (63)

Տէր Ներսէս հաստատեցաւ յԱթոռն իւր **ՋԻԷ (1478).** ԿԴ (64)

(262բ) *Տէր Շմաւոն* **ՋԼ (1481)**[4]**.** ԿԵ (65)

Տէր Թումայ Սոկոթլուեցի **ՋԼ (1481).** ԿԶ (66)

Տէր Առաքել **ՋԼ** *մինչև* **ՋԽԵ (1481-1496).** *գտաք զթիւ սորա Սոգութլուի հին եկեղեցւոյն.* ԿԷ (67)

Տէր Արստակէս **ՋԿԵ (1516).** ԿԸ (68)

Տէր Սարգիս՝ **ՌԳ (1554)** *թվին վախճանի Խաչինու դշլաղեցի.* **ՋՋԸ (1539).** ԿԹ (69)

Տէր Գրիգորիս ուրացողն. **ՌԵ (1556).** Հ (70)[5]

Տէր Դաւիթ Արջաձորեցի. նոյն ամին խեղդեն կախեալ ժամատանէն Գանձասարու չար անիծեալք Խաչին. ՀԱ (71)

Տէր Փիլիպպոս Տումեցի. **ՌԺԲ (1563).** ՀԲ (72)

Տէր Յովհաննէս **ՌԻԵ (1576), ՌԼԵ (1586)** *վախճանի.* ՀԳ (73)

Տէր Շմաւոն **ՌԼ ՌԿ (1581-1611)** *թուին Քոլատակեցի.* ՀԴ (74)[6]

Տէր Արիստակէս **ՌԼԷ (1588)** *Քոլատակեցի.* ՀԵ (75)

Տէր Մէլքիսէթ Արաշեցի. **ՌԽԲ (1593).** ՀԶ (76)

Տէր Սիմէօն Քոլատակեցի. **ՌԽԵ (1596).** ՀԷ (77)

Տէր Յովհաննէս[7]*՝ Գանձոյ եկեղեցւոյ շինօղն*[8]*.* **ՌՁԲ (1633).** ՀԸ (78)

Տէր Գրիգոր. **ՌՁԳ**[9]**,** *վախճանի* **ՌՃԲ (1634-1653).** ՀԹ (79)

Տէր Պետրոս Խանձկեցի. (263ա) **ՌՃԲ,** *վախճանի* **ՌՃԻԴ (1653-1675)**[10]**.** Ձ (80)

---

[4] *Մատենադարանում պահվում է Ակ-Կոյունլու Յաղուբ փադիշահի 1487 թ. ապրիլի 24-ի հրովարտակը՝ տրված Գանձասարի Շմավոն կաթողիկոսին, որով հաստատում է նրա կաթողիկոսական իրավունքները (տե՛ս Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պր. I, էջ 50-52, ռուսերեն պատճենը տե՛ս Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 241, վավ. 198):*

[5] *Լ. Մկրտումյանի հրապարակման մեջ այս կարևոր հատվածը զարմանալիորեն դուրս է ընկել, թեև նրա օգտագործած պատճենում ևս սույն տեղեկությունը առկա է (տե՛ս Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 240, վավ. 132, հմմտ. Լ. Մ կ ր տ ո ւ մ յ ա ն. նշվ. աշխ., էջ 219): Այդ բացթողման հետևանքով նրա մոտ խախտվել է կաթողիկոսների հետագա ամբողջ համարակալումը:*

[6] *Լ. Մկրտումյանի հրապարակման մեջ Տեր Շմավոնին առնչվող տեղեկությունը ևս դուրս է ընկել, ինչի հետևանքով նրա համարակալման տարբերությունը արդեն հասնում է երկուսի (հմմտ. Լ. Մ կ ր տ ո ւ մ յ ա ն. նշվ. աշխ., էջ 219):*

[7] *Պահպանվել է Սեֆյան Շահ Աբբաս I-ի 1606 թ. հրովարտակը՝ Գանձասարի Հովհաննես կաթողիկոսի կաթողիկոսական իրավունքների հաստատման մասին (տե՛ս Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. հրովարտակներ, պր. II, կազմեց Հ. Փափազյանը, Երևան, 1959, էջ 84-85):*

[8] *Այս տեղեկությունը հաստատվում է Գանձակի Ս. Հովհաննես-Մկրտիչ եկեղեցու հարավային պատին փորագրված սույն արձանագրությամբ. «Ի ժամանակն Ովանէս կաթուղիկոսի, թվին ՌՁԲ. (1633) ամի շինեցաւ սուրբ Ովանէս եկեղեցին» (տե՛ս Դիվան հայ վիմագրության, V, էջ 227):*

[9] *Պահպանվել է Շահ Սեֆիի 1634 թ. հրովարտակը՝ Գանձասարի կաթողիկոսությունը Հովհաննես կաթողիկոսի մահից հետո Գրիգոր կաթողիկոսին հանձնելու մասին (տե՛ս Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պր. II, էջ 110):*

[10] *Տե՛ս Լ. Մ կ ր տ ո ւ մ յ ա ն. Գանձասարի կաթողիկոսությունը Պետրոս Խանձքեցի կաթողիկոսի օրոք.– «Լրաբեր հասարակական գիտությունների», 2000, -1, էջ 88-97:*

Տէր Մէլքիսէթ ևս կա Արաշեցի[11]*. սուր անարգել բնակեալ մերձ Գանձասարու, յէտն ու յառաջն չիմացանք.* ՁԱ (81)

Տէր Սիմէօն շնորհալիր Ջարաբերթու[12] *Մեծ Կունեցւոյ.* ՁԲ (82)

Տէր Երեմիայ Ճալեցի. **ՌՃԻԵ (1676)** *հակառակեալ, անձամբ առեալ կաթուղիկոսութիւնն. ի միասին վարեն չարչարանօք*[13]*, որ խորին աղջատեալ ոմն Եղիայ անուն եպիսկոպոս անուան կաթուղիկոս, և նա ձեռնադրէ Տէր Երեմիայն. անուանեն կաթուղիկոս.* ՁԳ (83)

Տէր Եսայի Քոլատակեցի[14]*. մերձ Գանձասարու.* ՁԴ (84)

Տէր Ներսէս մեղապարտ, յետին թշուառացեալ[15]*.* **ՌՃԾԵ (1706)** *և այժմ* **ՌՃՁԵ (1736).** ՁԵ (85)

Տէր Իսրայէլ Մեծ Կունէից, որ այժմ վարէ զժողովուրդս **ՌՄԺԲ (1763)**[16]**.** [ՁԶ] (86)

---

[11] *Թվում է՝ նույն Մելքիսեթ Արաշեցու անունը ցանկում կրկնվում է:*

[12] *Սիմեոն Խոտորաշենցու կաթողիկոսանալու հանգամանքների մասին ուշագրավ տեղեկություններ է պարունակում Մատենադարանում 8965 թվահամարի տակ պահվող Ավետարանի գրիչ Գրիգոր քահանայի հիշատակարանը. «Շնորհիւն Տեառն Ամենակալի և նորին օգնականութեամբն աւարտեցաւ եռահրաշ և հոգիազարդ Աւետարանս՝ թուին ՌՃԻԴ. (1675) ամին, յուլիսի ամսոյ ԺԸ (18) աւուրն. ի երկիրս Գանձակայ, ի գեօղս Քարահատ՝ ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս: Եւ ի թագաւորութեանն պարսից Շահ Սուլէյմանին, ի հայրապետութեան Տանս Աղուանից Տեառն Սիմէօնի ամենիմաստ և սրբանուեր Հայրապետի Սրբոյ Աթոռոյն Գանձասարա՝ աշակերտ տեառն Պետրոսի սրբազան կաթուղիկոսի նոյն յԱթոռոյն, որ ի սոյն ամի փոխեցաւ առ Քրիստոս և հաստատուն կտակօք սահմանեաց, որ յետ իւրոյ մահուն զՍիմէօն րաբունապետն լինիցի կաթուղիկոս, որ և օգնականութեամբ Սուրբ Հոգւոյն և կամակցութեամբ ամենայն մեծամեծաց Տանս Աղուանից, նաև հրամանաւ թագաւորին պարսից և մեծի Հայրապետին Տեառն Յակոբայ պատրիարգին Սրբոյ Էջմիածնի, որ և ի սոյն ժամանակի նա ևս էր ի դուռն թագաւորին» (էջ 361բ-362ա):*

[13] *Այդ դեպքերի մասին տե՛ս Լ. Մ կ ր տ ո ւ մ յ ա ն. Սիմեոն և Երեմիա կաթողիկոսների «հակաթոռության» խնդիրը 17-րդ դ. վերջին քառորդին.– «Էջմիածին», 2000, թիվ Գ, էջ 75-83:*

Երեմիա Հասան-Ջալալյանը վախճանվել է 1700 թ., ինչպես վկայում է նրա տապանագիրը. «Այս է տապան Երեմիա կաթողիկոսին Աղուանից. յազգէն Ջալալ Դօլին. ՌՃԽԹ. (1700) թուին» (տե՛ս Դիվան հայ վիմագրության, V, էջ 65):

[14] *Խոսքը հայ ազգային-ազատագրական շարժման նշանավոր գործիչ և պատմագիր Եսայի Հասան-Ջալալյանի մասին է, որի կաթողիկոսական իրավունքները հաստատվել են Իրանի շահ Սուլթան Հուսեինի 1701 թ. հրովարտակով (տե՛ս Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. հրովարտակներ, պր. III, կազմեց Ք. Կոստիկյանը, Երևան, 2005, էջ 149-152):*

[15] *Ներսես Ջրաբերդցու կաթողիկոս դառնալու հանգամանքների մասին տե՛ս Ս ի մ ե ո ն Ե ր ե ա ն ց ի. Ջամբռ, Երևան, 2003, էջ 115-120: Ներսես կաթողիկոսը վախճանվել է 1763 թ. (տե՛ս Դիվան հայ վիմագրության, V, էջ 227):*

[16] *Տեր Իսրայելին վերաբերող տեղեկությունը ավելացված է հետագայում՝ այլ ձեռագրով:*